

87.

6362

3K26
9-64

07 JUN 2005

20 NOV 2009

№ 14 Ուհասածանի Սոթիսկի Սօմական Թե՛յերս-
Տիկ Խորշը Ազին ՀԱՆՐԱՊԵՑՈՒԹԻՒՆ Ա 14

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!

ԼԵՆԻՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻԶ ՈՒԼԵԱՆՈՎ

ԿԵԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՐԳՄ. Ա. ԿՈՉԻՆԵԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՄՈՍԿՎԱ—1918

363 588

I. ԶԻՆՈՎԵԻ

לְבָנָה



3646-91

U n U 4 h U

Տպարան Եղբ. Կ. և Ռ. ՄՈՒԽԱՐՅԵԱՆՆԵՐԻ
1918

ԹԱՆԿԱԳԻՆ

ՆԱԴԵԺԴԱ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎՆԱՅԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքով սղագրութիւնն է այն ժառի, որ ես աքտա-
սանել եմ 1918 թի սեպտեմբերի 6-ին Պետրոգրադի Խոր-
հրդի նիստում: Ըսկերները լասով պահանջում էին ինձնից՝
առանձին գրքով հրատարակել այդ ժառը, որպէսզի ընկեր
Լենինի կենսագրութեանը կարողանալին ծանօթանալ հնարաւո-
րապէս լայն բանւորական և գիւղացիական շրջաններ:

Իմ ժառի մէջ, հասկանալի է, տրած է ընկեր Լենինի
կեանքի ու գործունէութեան ամենամոռուցիկ ակնարկը: Ես մը-
լուղբւել էի մշակել ու լրացնել այս ժառը: Բայց ընթացիկ
աշխատանքը, խորապէս ցաւում եմ, թոյլ չտւեց ինձ՝ նոյնիսկ
ուշադիր վերընթեռնել սղագրութիւնը: Ես դգում եմ, որ չեմ
ասել տամնորդական մասն այն ամենի, որ կարելի է և պէտք է
ասել ընկեր Լենինի կեանքի ու գործունէութեան մասին:

Այս գրքով լոյն թոյլ սկիզբը կղնի ընկեր Լենինի այն
կենսագրութեան, որ պէտք է գրուի դեռ ևս: Աւելին չէ յաւակ-
նում այս գրքովիք:

Պետրոգրադի Խորհուրդն որոշել է միաժամանակ լոյս
ընծայել այս գրքովիք նաև ֆրանսերէն, գերմաներէն ու անգ-
իերէն:

Ինձ մնում է միայն ներողութիւն ինդրել ընկեր Լենինից
որա համար, որ ես համարձակւեցի նրապարակով մի քանի քան
ասել, որ ընկեր Լենինը հաւանաբար կգերազաւէր անյայտ թող-
նել լայն հասարակութեան: Բանւոր դասակարգը պարտաւոր է
իմանալ իր երախտաւոր առաջնորդի կենսագրութիւնը:

Ն. Լ Ե Ն Ի Ն

Ընկերներ! Վերջին շաբաթը կարելի է Լենինի շաբաթ անւանել: Ես կարծում եմ, որ ես բնաւ չտփաղանցրած չեմ լինի, եթէ ասեմ, որ Պետրովը դի, ամբողջ Ռուսաստանի, այլ և համայն աշխարհի իւրաքանչիւր մի բանւոր՝ որքան որ նրան հասել է ընկ. Լենինի վրայ գործւած յարձակման լուրը՝ այս առաջնապալի օրերին ուրիշ միտք չի ունեցել, բան այն միտքը—կառողջանա՞յ, արդեօք, միշտզայնն Կոմմունալի վիրաւոր առաջնորդը: Եւ ես երշանիկ եմ, ընկերներ, ուրախ լուր հաղորդելով Զեղ՝ այսօր, վերջապէս, մենք կարող ենք ընկեր Լենինի ապաքինումը լիսապէս ապահովւած համարել: (Քուռն Ճափեր):

Ընկերներ, իմ ձեռքին է հէսց իր իսկ ընկեր Լենինի գրած հեռաղիրը: (Քուռն Ճափեր): Այս հեռաղիրը խփւած է այսօր, յերեկւայ ժամը 1-ին և 10 ր. Կրեմլից: Այդ, բատ երեսովթին, ընկեր Լենինի առաջին հեռաղիրն է նրա կազմուրման սկզբից: Ընկեր Լենինը մի քանի գործնական ցուցմունքներ է տալիս և հեռաղիրը վերջացնում հետևեալ խօսքերով. (Գործերը վրոնառում յաջող են զնում. չեմ կասկածում, որ էլ աւելի լաւ կդնան): (Ծափեր): Այլպիսով, ընկերներ, պարզ է մի բան, որ ընկեր Լենինը պիտի ապրի (Ճափեր, ովացիա) ի սարսափ

կոմմունիզմի թշնամիների և ի բերկրանս կոմմունիստ-պրոլետարների:

Ընկերներ, ինքնին հասկանալի է, որ այս դահլիճում մի ծարդ անգամ չկայ, որ բնդիանուր առամբ կամ լիտապէս չխմանար, թէ ո՞վ է Լենինը: Իւրաքանչյուր բանուոր լսել է Լենինի մասին, զիտէ որ նա հակայ մի գէմք է համաշխարհալին բանտարական ամբողջ շարժման պատմութեան մէջ: Իւրաքանչյուրն այնքան է ընտելացել «Լենին» բառին, որ չէ խորհում վերշիվերջոյ յատկապէս ի՞նչ է արել ընկեր Լենինը միշտզային և ոռւս բանուորական շարժման համար: Իւրաքանչյուր պրոլետար զիտէ, որ Լենինը—դա առաջնորդ է, Լենինը—դա համաշխարհալին կոմմունիզմի առաքեալ է: (Մագիկ): Բայց ես կարծում եմ, ընկերներ, որ մենք տւելի պատիւ արած չենք լինի այսօր մեր ուսուցչին ու առաջնորդին, քոն այն, որ ես, որ բաւականին ժանրամասն զիտեմ ընկեր Լենինի կենսադրութիւնը—ինձ բազդ է վիճակւել տասնեակ տարուց աւելի ամենասերտ աշխատակցութեամբ ձեռք-ձեռքի տւած աշխատել ընկեր Լենինի հետ—և որ ես ալ-սօր առիթից օգտւեմ, որպէսզի աւելի թարմիկ բարեկամներին ու հին ընկերներին, որ հնարաւորութիւն չեն ունեցել այնպէս մօտից զիտել ընկեր Լենինի գործունէութիւնը, պատմել ընկեր Լենինի փաստական կենսապրութիւնը թէկուզ համառօտ կերպով: (Բաղմաթիւ ձայներ. «Խողովում ենք», «Խողովում ենք»):

* * *

Վլադիմիր իլիչ Լենին-Ռուբեանովն ալժմ 48 տարեկան է: Նա ծնւել է 1870 թ. ապրիլի 10-ին Սիմբիրսկ քաղաքում: Եւ իր կեանքի 48 տարիներից ընկեր Լենինը գրեթէ 30 տարիներն ամբողջապէս նւիրել է յօդուա աղատազրական շարժման աշխատանքի:

Ընկեր Լենինի հայրը՝ Ժագումով բանւոր, Վոլգայի վրայ ժողովրդական զպրոցների տեսուչ էր և վայելում էր իր շրջանի զիւզական և քաղաքացին գպրոցների ուսուցիչների շերմ սերը:

Ընկեր Լենինի մօրն ես անձամբ էլ էի ճանաչում: Նա մեռաւ 1913 թւին: Ալէքսանդր Ալեքսանդր Ալեքսանդր Ալեքսանդր Ուլիանովին: Այնուհետեւ նա իր մայրական քնքանը նւիրեց Վլ. իլիչին: Եւ ընկ. Լենինը, իր հերթին, քնքով սիրում էր վշտից կրւած իր մայրիկին:

Ապրելով էմիգրացիայում, ցարական հառավարութիւնից հալածւած, ընկ. Լենինը կտրւում էր ամենատանիետաձգելի աշխատանքից, որ յատկապէս դնայ Շվեյցիա, աւսոնի այնտեղ իր մօրն և նրա կեանը իերշին օրերը պայծառացնի:

Դիմապիսան աւարաելուց յետով Վլ. իլիչը մտաւ Կազանի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէն: Մայրաքաղաքի համալսարանների դռները, որպէս զիսատւած աւերրորիստի եղբօր, փակ էին նրա առջեւ: Սակայն Վլ. իլիչն երկար ժամանակ ուսանող չմնաց: Մի ամսից յետոյ նրան համալսարանից ար-

տաքսեցին ուսանողական լեզափոխական շարժման
մասնակցելու պատճառով։ Միայն չորս տարուց լե-
տոյ Վլ. Իլիչը հնարաւորութիւն ունեցաւ քննու-
թիւն տալու։

Իրաւաբանական ասպարեզը, սակայն, չեր գրա-
ւում ընկեր Լենինին։ Վլ. Իլիչը միշտ շատ հեղնա-
կան տոնով է պատմել իր իրաւաբանական «պրակ-
տիկալի» սակաւաթիւ օրերի մասին։ Ընկեր Լենինը
մղւում էր միանդամայն ուրիշ կողմ։ Նո լեզափո-
խական գործունեութեան էր տեսչում։

* * *

Ընկեր Լենինը կարծես կանգնած է լեզափո-
խական-նարուկնիկների հին սերնդի և լեզափո-
խական-մարքսիստների նոր սերնդի անջրապետում։
Ընկեր Լենինն ինքը մասնակցել է ուսանողական
նարուկնիկական խմբակներին, բայց զեռ այն ժա-
մանակ էլ մի ուղղով կանգնած էր մարքսիստական
բանակում։

Սակայն, Վլ. Իլիչը արեամբ շաղկապւած է,
լեզափոխական-տերրորիստների առաջին սերնդին,
այն փառաւոր գործիչների, որոնց անուններն այսօր
էլ շաղում են որպէս կուրացուցիչ աստղեր, — որով-
հետեւ նրանք սպանում էին ոչ թէ ժաղովրդի բա-
րեկամներին, ինչպէս այդ անում են այժմ աշ-էսէ-
րականութեան թշւառ գանձները — այլ սպանում
էին ժողովրդի արիաններին ու դահիճներին։ Վլ.
Իլիչն արեամբ շաղկապւած է մարտիկների այդ

սերնդին։ Նա այդ սերնդին շաղկապւած է իր եղ-
բակը Ալեքսանդր Իլիչ Ռուբենովի միջոցով, որ անտ-
րոգնապեավոլիայի ականաւոր գործիչն էր և որ զրա-
պատճառով էլ 1887 թ. կախւեց ցարական կառա-
վարութեան ձեռքով։

Ինըն ընկեր Լենինն երրէք նարուկովուց չփ
եղել։ Բայց նա մեղ միշտ սովորեցրել է՝ ամենա-
շեմ համակրանք ունենալ լեզափոխական փալուն
դործիչների, լեզափոխական-նարուկնիկների առաջին
սերնդի այդ պլէադալի հանդէս։ Լենինը, սկսած
այն ժամանակից, ինչ քաղաքական դիտակից կեան-
քով է աղբում, երրէք չփ ընդունել նարուկնիկական
թէորիաները։ Նո աչքի ընկառ այն ժամանակ, երբ
սկսեց պալքարել լեզափոխական նարուկնիկութեան
գէմ։ Միխալլովսկու կարուկ հականառողն է եղել նա։
Սոցիալիստական գործունեութեան ասպարիզում
նա իրեն առաջին փառքը վաստակեց յանկապէս
նարուկնիկութեան գէմ պալքարի մէջ։ Բայց ո՛չ ոք
այնպէս չէր յարդում և բանւորներին ուսուցանում
լարդանք ունենալ ցարիզմի գէմ այդ առաջին մար-
տիկների հանդէս, որպէս Վլ. Իլիչ։

Ընկեր Լենինի աչքում անհասանելիօրէն րարձը
են կանգնած այնպիսի զործիչներ, որպիսիք են
Ժելեզորովը և Սոֆիա Պերովսկայան — մարդիկ, որ
70-ական թւականների վերջերին և 80-ական թւա-
կանների սկզբին, երբ Ռուսիան ժողովուրդների հա-
մար բանտ էր, երբ ծանր էին շնչում ազատութեան
բարեկամները, երբ Ռուսաստանում բանւորները նոր

էին սկսում դասակարգ կազմաւորել — դրօշ էին բարձրացնում և ոռոմբով ու տարծանակով ցարի դէմ գնում: Վ. Իլիչը լու էր հասկանում, թէ որքան լիրաւի մեծ և անդրկելի է ոռուս յեղափոխութեան անդրանիկ կարապեաների երախտիքը:

Եւ ընկեր Լենինը չէր հրաժարւում այդ ժառանգութիւնից: Նա ասում էր. «Այդ ժառանգութիւնը յատկապէս մեզ է պատկանում: Մեր նպատակն է առաջ տանել այն գործը, որ սկսել է ժեղարովք: Ժեղեարովք, որ կապւել էր բանւոր դասակարգի հետ և հերթի դրել սոցիալիստական յեղափոխութիւնը, դա հէնց բոլշևիկ է, դա հէնց կոմմունիստէ: Հասարակական նոր պայմանների մէջ ժեղեարովքի գործը կատարելու համար — մենք պիտի յեղափոխական մարքսիստներ դառնանք, մենք պիտի մի շնչով շնչենք բանւոր դասակարգի հետ, մեր օրերի յեղափոխական միակ դասակարգի հետ, այն դասակարգի, որ չէ կարող ինքովինքն աղասագրել, չաղատագրելով ամբողջ աշխարհը»: — Վլադիմիր Իլիչն առանձնապէս սիրում է և հպարտանում առաջին բանւոր առաջնորդ ատաղձագործ Ստեպան Խալտուրինի դէմքով: Լենինը նրան անձամբ չէր նանաչում, այլ զրերից և պատմւածքներից, ինչպէս և մենք ենք ճանաչում: Դուք զիտէք այդ հանճարեղ պրոլետարի պատմութիւնը, որ ոչ միայն սղայթեցրեց Զմերային Սպարանիքը, այլ որ աւելին արաւ՝ տռաշինը բանւոր դասակարգի անունից քաղաքական կուի դրօշը պարզեց ցարիզմի դէմ: Ընկեր Լենինն ասում էր.

«Երբ մեզնում հարիւրաւոր պրոլետարներ կլինին Խալտուրինի նման, երբ նրանք այլես եզակիներ չեն լինի, որոնք ոռոմբով կամ ատրճանակով գնում էին այս կամ այն անհատ մինիստրի դէմ, — երբ նրանք զլուխ կկանգնեն միլիոնաւոր բանւոր դասակարգին, — այն ժամանակ մենք անպարտելի կլինինք, այն ժամանակ ցարիզմի վախճանը կգայ, իսկ նրանից յետոյ նաև բուրժուազիայի տիրապետութեան վախճանը»:

Առանձնապէս աչքի է ընկնում ընկեր Լենինի սիրալիք վերաբերմունքը դէպի այն պրոլետարները, որոնք փոքր ինչ բարձրացել են ընդհանուր մակերեսով: Գործիչներից մէկը, որին ընկեր Լենինն ամենքից շատ էր գնահատում ու սիրում, բանւոր իվան Վասիլ' և իչ Բաբուշկինն էր, որի հետ միասին հիմք է դրել բանւորական առաջին խմբակներին, միասին վարել բանւորական առաջին գործադույները, միասին մասնակցել «Աւրա»-ի («Կայձեր») կազմակերպութեան: 1905 թ. յեղափոխութեան մէջ այդ ընկերն ականաւոր դեր կատարեց, և միայն 1907 թ. Վ. Իլիչը պատահաբար տեղեկացաւ սիրիցի բարեկամներից, որ Բաբուշկինին զեներալ Ռենենկամպֆը գնդակահարել է Սիրիրում:

Ի. Վ. Բաբուշկինին և Շեղունովին, որ տակաւին կենդանի է և որին նանաչում են Պիաերի բանւորները (նա այժմ կուրայել է) — բանւորների

միջից ելած այդ ականսաւոր մարտիկներին ընկեր Լևինը սիրում էր ինչպէս եղբայրների, սրանց շքինակ էր ըերում մեզ, նրանց մեջ աւեսնում խօսական կարապեաներ, ծագող բանւորական լեզափոխութեան խօսական առաջնորդներ:

* * *

Ընկեր Լենինի գործունեութեան առաջին շրջանը, ինչպէս և ինտելիգենցիալի միջից ելած շատ յեղափոխականների — ուստանողական խմբակների մէջ անցաւ: Երբ ընկեր Լենինն արտաքսւեց Կազանի համարժարանից, նա յայտնեց Պետրովրազում: Եւ նա մեզ պատմում էր, թէ ինչպէս, արդէն Սամարայում իսկ հեշտոց թեամբ մարքսիստական իդէաներով վարակելով՝ նա ման էր գալիք Պետրովրազում և մարքսիստ էր որոնում: Բայց մարքսիստների առեսակնոց այն ժամանակ չտիպազնոց հաղւազիւտ բան էր: Պիտերում մարքսիստ չկար և օրք ցերեկով ճրազով պէտք էր վնարել: Ամբողջ ինտելիգենցիալի մաքին իշխում էին նարովներիները, իսկ բանւոր գաստկարդը գեռ նոր էր հաղորդակից գտանում քաղաքական կեանիրին:

Եւ ահա պատաճի բնկեր Լևինը 1—2 տարուց յետոյ Պետրովագում բանուորական առաջին խմբակցութիւններն եւ սահմանադում, իր շուրջը համախմբում մարքիսատ-բնուուլլիկենանների առաջին խումբը: Եւ մի կարճ միջոցից յետոյ արգեն զրական ասպարիզում բնկեր Լևինը սուր է բանեցնում:

Նարողնիկների վաղեմի առաջնորդ Ն. Կ. Միխայլով-
սկու դէմ: Լենինը (Իլին մականունով) հանդէս է
գալիս անտեսազիտական մի շարք փայլուն յօդւած-
ներով, որոնք մի անգամից նրա համար անուն են
փաստակում: Եւ մէկէն իսկ նարողնիկական ինտել-
լիգէնս շրջաններում որոշ իրարանցում է նկատ-
ւում: Տիրաբար ու զօրաւոր մէկը շարժեց մանր-
բուրժուական նահինք: Սկսեց ջրի շարժումք: Հո-
րիզոնում նոր դէմք երևաց: Մէկն արթնայնում էր:
Նոր ու թարմիկ շունչ դրացւեց:

Члены рабочего класса должны были участвовать в выполнении плана по производству промышленной продукции на 1928 год. Важнейшим мероприятием для выполнения этого плана было создание кооперативов. Всё это было направлено на то, чтобы рабочий класс мог самостоятельно решать свои производственные и социальные задачи. Важным шагом в этом направлении стало создание Союза рабочих кооперативов СССР (Союз РКСС), который объединил более 100 тысяч кооперативов. Союз РКСС был создан в 1928 году на базе Союза рабочих кооперативов РСФСР и Союза рабочих кооперативов УССР. Союз РКСС имел право выдавать кредиты, заключать контракты с государственными учреждениями и предприятиями, а также проводить научно-техническую работу. Союз РКСС был создан в 1928 году на базе Союза рабочих кооперативов РСФСР и Союза рабочих кооперативов УССР. Союз РКСС имел право выдавать кредиты, заключать контракты с государственными учреждениями и предприятиями, а также проводить научно-техническую работу.

Այս պահուն հենց այդ էր էական—տուղանք-ների շուրջն աղիտացիս մզել, հրահրել տնտեսա-



կան կոնֆլիկտները, իւրաքանչիւր անտեսական գործադուլ բարձրայնել մինչև քաղաքական անցքի մակերևովթը: Եւ Վաղիմիր ի՛իչն իրեն յատուկ խանդաքառութեան ամբողջ թափով նսիրւում է այդ գործին: Գիշերը և ցերեկն անց է կացնում բանւորական կվարապներում (թաղերում): Նրան հետապնդում է ոստիկանութիւնը: Նա բարեկամների մի փոքր խմբակ ունի միայն: Ժամանակի այսպէս կոչւած լեզափոխական ամբողջ խնտելիդենցիան անըարեացակամ է դիմաւորում նրան: Այդ մի ժամանակ էր, որ չափացանց հեռու չեր այն պահուց, երբ նարողնիկներն ալրում էին Պետսանովի առաջին, մարքսիստական հեղինակութիւնները, որով ուստանել է և Լենինը:

Եւ ընկեր Լենինն այսաեղ նոր ուղի էր զծում: Ընդհանրապէս, ընկեր Լենինի ամրողջ գործունեութեան մէջ զուք կարող էր նկատել, որ նա յատկապէս նովատոր է, նա գնում է հոսանքի զէմ, նա նոր տկօս է զծում հասարակական - քաղաքական կեանքում: Եւ 90-ական թւականներին Պետրովագում նրան վիճակւեց նոր ուղի զծել ստեղծել, հաւաքել բանւորների առաջին խմբերը, բանւորային խսկացական խնտելիդենցիալի առաջին խրմբեր, որոնց միշտ են առաջացել բանւորական արդի լեզափոխութեան շատ առաջնորդներ:

Այժմ շատ յանախ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը, Խորհուրդների չամառուսական չամագումարն են դալիս հեռաւոր Սիբիրի, Ուրալի որեւէ

վալրերից բանւորներ, որոնք այժմ Խորհուրդների նախագահներ են, տեղական շարժման առաջնորդներ: Նրանք զալիս են ընկեր Լենինի մօտ և սկսում լիշտեցնել Ախսկ լիշում էր, որ 90-ական թւականների սկզբին մէնք ձեզ հետ այս-ինչ կամ այն ինչ տեղը, եռացուկի պատճառով այս-ինչ անլեզալ թռուցիկն էինը հրատարակում կամ այս-ինչ գործադուլը կենարկում): Ընկեր Լենինը միշտ չէ լիշում նրանց. չափազանց շատ մարդ է հանդիպել նրա հանեպարհին: Բայց նրանք իրենք բոլորը նրան լիշում են: Նրանք զիտեն, որ նա իրենց ունուցիչն էր, որ նա առաջինն է իրենց մէջ ձեզ կոմմունիզմի կայծը. Նրանք զիտեն, որ նա իրենց խսկական բարեկամն էր ու առաջնորդը:

90-ական թւականների վերջին մօտ երկար ժամանակ բանսուում նստելուց յետոյ ընկեր Լենինը պիտի աքսոր զնար: Եւ այստեղ նա զրական - զիտական վիթխարի աշխատանք է կատարում: Այստեղ նա զրում է մի քանի աշխատութիւններ, որոնցից միայն երկուսի վրայ կանդ կառնեմ ես: Առաջին աշխատառութիւնը մի փոքրիկ բրոշիւր է՝ Ամուս սոցիալ - գեմոկրատների նպատակը): Այս բրոշիւրն այժմ շատ քչերն են կարդում: Բայց տնտեսապէս յետամանց երկրում սոցիալ-գեմոկրատական շարժման վիճակի խնդիրը մարքսիստորէն զիտելու գլուխ-գործոց է: Այն ժամանակ գեռ վերջնապէս չեր վճռուած այն հարցը, թէ ի՞նչ կապ պիտի ունենան բանւորների բաղաքական պայքարը

շարիդմի դէմ և պրոլետարիատի պայքարը բուրժու-
ագիալի դէմ յանուն անտեսական պահանջների և
սոցիալիզմի:

Այժմ, ընկերներ, այդ բոլորը մեղ ալբուրեն է
թւում: Բայց՝ այն ժամանակ այդ հարցն այդպէս
պարզ չէր: Տիրահոչակ «Էկոնոմիստաները», մեր մեն-
շելիների նախորդները, խնդիրն այնպէս էին գնում,
որ քաղաքական կուրը պիտի վերապահել լիբերալ
բուրժուազիալին, իսկ բանւորի նպատակը պիտի
լինի կուր մգել—կոպէին բուրժու հասցնելու համար:
Ընկեր Լենինը, հանդուցեալ Պլեխանովից յետոյ
(այստեղ պիտի առել, որ նա շատ բան է վերցրել
Պլեխանովից) Խուսիալում դործող սոցիալական ու-
ժերի հոյսակապ վերլուծութիւնը տւեց:

— Խուսաստանում բանւորական կուսակցու-
թիւն սաեղձելուն մենք չպիտի սպասենք մինչեւ
այն ժամանակ երբ մենք քաղաքական աղա-
տութիւններ կնւաճենք: Ոչ, — ասում էր ըն-
կեր Լենինը, — մենք հարիւր տարով յետ ենք
ֆնացել Եւրոպայից ո՛չ թէ նրա համար, որ այժմ ան-
պատճառ բանւորական կուսակցութիւն կադմակեր-
պելուն սպասենք, մինչեւ որ մեր բուրժուազիական
իշխանութեան կարանաք: Ո՛չ հէնց այժմ, յարիզմի
բունութեան ու կրնկի տակ, այս սասափկ դժւարուն
պակմաններում մենք պարտաւոր ենք և պիտի
սաեղձենք բանւորների ինքնուրոյն դասակարգալին
սոցիալիստական կուսակցութիւն, որդէն այժմ իսկ

և' յարիզմի և' բուրժուազիալի դէմ պայքարող
կուսակցութիւն:

Յիշեալ բրոշիւրի ձեռագիրը տարան-յանձնեցին
արտասահման՝ «Աշխատանքի ազատազրութեան
խմբակին» («Группа освобождения труда»):
Այն ժամանակ Շվեյցարիայում դործում էր Պլիխա-
նովից, Աքսել'րոդից և Զասուլիչից բաղկացած
խմբակը, մարդիկ, որ Խուսաստանում սոցիալ-դե-
մոկրափակի առաջին հիմնադիրներն են: Այն ժա-
մանակ արդէն մօտ 15 տարի էր, ինչ նրանք ապ-
րում էին վտարանդի: Եւ երբ նրանց հասաւ Լե-
նինի ձեռագիրը, այդ նրանց համար առաջին
ոստն եղաւ ծագող գարնան: Եւ ուրիշ ո՛չ ոք, քան
Պատել Աքսել'րոդը—ոք երբեմն սոցիալիստ էր և
ունակ էր նկատելու բանւոր դասակարգի իսկական
առաջնորդներին,—Աքսել'րոդը, երբ ստացաւ այդ
ձեռագիրը, հիացաւ: Բարեկամների շրջանում այն
ժամանակ նա ասում էր, թէ մեր սոցիալ-դեմոկրա-
տիզմի շարքերում դա զօրեղ մի ոյժ է, որ երեան
է եկել որ ծագում է առաջին մեծութեան նոր
աստղը: Աքսել'րոդը Լենինի բրոշիւրին յառաջա-
րան գրեց, ուր գովասանքի համար բաւականաչափ
բառեր չեր գտնում ընկեր Լենինին զրւատերւ:
Նա ասում էր, թէ Պլիխանովից յետոյ առաջին ան-
գամ երեան է գալիս բանւորական շարժման առաջ-
նորդն ու պրակտիկը, թէ Լենինը մի ոյժ է, որի
մեծագոյն առաջան ապահովւած է...

իսկ այս գեղըռում Աքսել'րողը, ի պատիւ իրեն,
չխալւեց:

Այդ աքսարանքում ընկեր Լենինը զրեց իրօք-
դիտական իր աշխատութիւնը՝ «Կապիտալիզմի դար-
դացումը Ռուսիայում»—զիրք, որ պէտք է դառ-
նալ, և նշանակելի չափով գարձել է, իւրաքանչիւր
բանւորի սեղանի գիրը: Այդ գրքի մէջ ընկեր Լե-
նինը մաքրում էր հաշխւր նարոգնիկների հետ, մեր
ինտելիգենցիալի ամբողջ մի սերնդի այն ժամանա-
կի խոհերին իշխողների գէծ: Նա փայտուն կերպով
ապացուցեց այդ աշխատութեան մէջ, թէ արգա-
րացի էր Պլեխանովը, որ պնդում էր, թէ Ռուսիան
էլ զերծ չի մնայ կապիտալիզմի ստադիալից (աստի-
ճանից): Մի ամբողջ շարք թւեր ձեռքին՝ նա ցոյց
տւեց, որ 90-ական թւականներին մեր երկիրն ար-
դէն կապիտալիզմի փուլի մէջ է մաեր ։ Նա տւեց
խորունկ ու նրբին վերլուծումը Ռուսաստանում
հոգագործութիւնը զարգանալու և կապիտալիզմը
նրա մէջ բոխն դնելու: Զօրուոր զիտական ապա-
րատի օժանդակութեամբ ընկեր Լենինը վերլուծում
էր երկրի ամբողջ տնաեսութիւնը, թէ քաղաքացին
և թէ զիւղական: Եւ առարկայական ու հանգիստ
այդ վերլուծութիւնից ինքնին ինդափոխական եղա-
կացութիւնները էին բղխում բանւոր դասակարգի
նալատակների մասին:

Նոյնիսկ բուրժուական պրոֆեսորներից ըն-
կեր Լենինի այդ գիրը զիտական մէծ աշխատու-
թիւն է հանաչւել: 1902 թ. ինձ, տակաւին Պարի-

զում պրոֆ. Կովակասկու և այլոց ձեռքով կազմա-
կերալւած սոցիալական դիտութեանց գպրոցում ու-
սանող եղած ժամանակս վիճակւել է պրօֆ. Մաք-
սիմ Կովակասկուց, լսել Վլադիմեր Իլիչին ուղղած
իր հայեացքով, մեծագոյն գովասանքը: Նա ասաց.
«Ինչ լաւ պրոֆեսոր կարող էր դառնալ Լենինը»:
Պրօֆ. Կովակասկու շրթունքներին այդ ամենա-
բարձր գովասանքն էր: Այս, ընկեր Լենինը կարող
էր լաւ պրոֆեսոր դառնալ, բայց նա գարձաւ-
րանւորական կոմմունալի առաջնորդ: Խակ այդ, կար-
ծում եմ ևս, աւելի է, քան հանճարեղ պրոֆեսոր-
ներից հանճարեղը: (Ծափեր):

Այդ մինչուն աքսորանքում և աքսորւելու
նախօրեակին ընկեր Լենինը կոխւ սկսեց միւս թեփ
վրայ ևս: Մի ձեռքով պալքար մղելով նարոգնիկ-
ների գէմ յանձինս Միխալլովսկու և ալոց, նա հենց
այդ պահուն տեսական կրիւ սկսեց այսպէս կոչւած
լեզալ մարքսիզմի գէծ: Այստեղ ևս չեմ կարող հան-
գամանօրէն կանչ առնել զրա վրայ Բայց Զելնից
շտաերը զիտեն, որ 90-ական թւականներին Ռու-
սիայում մի ամբողջ բաւականին լայն հոսանք էր
գոյացել, այսնին լեզալ մարքսիզմ անունով: Նրան
դլուխ էին կանցնած Պ. Ստրուվին, Տուգան-Բարա-
նովսկին և հակա-էղափոխական բուրժուազիայի
այժմեան միւս առաջնորդները: Այդ հոսանքը սո-
ցիալական խորունկ հիմք ուներ: Այն ժամանակի
միջերանները վնարում էին սոցիալական մի միջա-
վայր, որին կարողանալին ինսել յանուն բուրժուա-

կան ազատութիւնների ցարիզմի դէմ պայքարելու: Եւ նրանք տեսնում էին, որ բացի բանւօք գասակարդից ուրիշ դասակարդ չկայ:

Նրանք տեսնում էին, որ նարոդնիկներն իրենց պապաւանդ «թէորիայով» թէ մեզնում կապիտալիզմը չկալ—ակներև կերպով սխալ էին: Եւ նրանք սկսեցին մարքսիզմին կառչել, քամելով նրանից յեղափոխական ողին և դարձնելով այն «լեզար», ձեռնասուն (մարքսիզմ):

Նարոդնիկների դէմ մղող պայքարում լեզար մարքսիստներն առժամանակեալ մեր գաշնակիցներն էին: Նրանք ևս, ինչպէս և մենք, պայքարում էին Միխալովսկու դէմ: Եւ մի ժամանակ մենք նրանց հետ որոշ բլոկով էինք կապւած: Բայց ընկեր Լենինի նրբազդաց ականջը Պետր Սարուվէի և ընկերութեան հէնց առաջին հեղինակութիւնների մէջ բաց արաւ կեղծ նոտերը: Լենինը մէկէն ասաւ, որ դա—մի ժամով գաշնակից է, որ նրանք վերջ ի վերջով մեզ կդաւաճանեն:

Նշանակալից է այն քննադատութիւնը, որին ընկեր Լենինը ենթարկեց Պ. Սարուվէի յախնի «Քննական նկատողութիւններ» («Критические Заметки») զիրքը: Սարուվէն երկար ժամանակ սոցիալ-դեմոկրատ էր համարեւում: Նա հրատարակեց Միխալովսկու դէմ «Քննական նկատողութիւններ» գիրքը, որ մեծ աղմուկ հանեց: Այդ զիրքը քննադատեցին և Պլեխանովը և Լենինը: Պլեխանովը քննադատեց իրեն յատուկ զրական ակադեմիկոսի

փայլով. Լենինը սարբեր եղանակով քննադատեց: Ան զգում եմ և զիտեմ,—ասում էր Լենինը,—որ մի կամ երկու տարուց յետոյ Սարուվէն կհեռանայ բանւոր գասակարդից և մեղ բուրժուազիալին կմատնից: Սարուվէի զիրքը վերջանում էր՝ «խոսափանենք մեր անկուլտուրականութիւնը և գնանք կապիտալիզմից ուսանելու» խօսքերով: Այս բառերի վրայ պէտք է մտածել—ասում էր Լենինը, ևս վախում եմ բանն էնպէս վերջանայ, որ էդ Սարուվէն գնայ ո՛չ թէ կապիտալիզմից ուսանելու, այլ կապիտալիստների մօտ): Եւ թէպէտ Սարուվէն Լենինի ընկերն էր և իբրև ընկերոջ՝ Լենինին և ժամանակի սոցիալ-դեմոկրատիալին անդնահատելի ժառայութիւններ էր անում, բայց Վլադիմիր Իլին իրեն յատուկ հաստատակամութեամբ ու հետեղականութեամբ, հէնց որ ականջովն ընկաւ կեղծ նոտը Սարուվէի խօսքերի մէջ, ազդանշան տւեց: Նա սկսեց մարառել Սարուվէի դէմ և Տուլին կեղծ անունով մի յօդւածով հանդէս եկաւ զրաքննիչի այբած ժողովածւի մէջ, ուր հանդամանօրէն բաժարեց պն Սարուվէին, ըննելով նրա իւրաքանչանչիւր նախադատութիւնն ու գրութիւնը, թէ «Հապա Դուք, պ. Պետր Սարուվէ, գուցէ ինքներդ այդ չէք հասկանում, զուք ինքզինքնիդ բանւորական շարժման անկեղծ կողմնակից էք համարում, բայց ձեր նորի մէջ ես բուրժուական հիմն եմ լսում:

—Դուք բուրժուական իդէոլոգ էք, դուք անխուսափելիօրէն բուրժուազիալի դասը կգասւէք և

կկարւէք բանւոր գասակարդից: Դրա մեղառորը Դուք ինքներդ էք, որովհեաև դուք բանւոր գասակարդին նայում էք որպէս միջոյի և ոչ որպէս նպատակի: Նա Զեղ համար կարեօր է, որպէս միոյժ՝ յարի զէմ: Եւ դուք կամնում էք նրան օդագործել, նրան ոչինչ տալով: Թոյլ տւէք ալդ թոյլ չտալ Զեղ: Մենք մինչեւ ալժմ պայքարել ենք յարի ուրուժուաղիացի զէմ, և մենք հռչակում ենք մի ֆրոնտ ևս—մենք պիտի կուենք (լեզալ) մարքսիզմի զէմ: Մենք խիսկան, յեղափոխական մարքսիզմի կողմանակից ենք և մենք մխառում ենք Զեր խուզուժ (լեզալ) մարքսիզմը:

Այսպէս էք ասում ընկեր Լենինը:

* * *

Այդպէս է ընթանում ընկեր Լենինի զործունէութիւնը Սիրիրի աքսորանքից տառչ և տրաստանքում: 90-ական թւականների սկզբին Վլ. Իլ'ին իր առաջն էմիգրացիալի մէջ է ընկնում:

Էմիգրացիալում Լենինն երկու անդամ է եղել: Անտեղ նա մի ըանի տարի է ապրել: Ինձ և ուրիշ ընկերների վիճակւել է նրա հետ միասին կրել Երկրորդ էմիգրացիան: Եւ երբ մեզ թախծալի ու ժանր էք զարիս, առանձնապէս վերջին ժամանակը, պատերազմի միջոցին, երբ մենք ոգով ընկնում էինք, (այն ընկերները, որոնք եղել են էմիգրացիալում, զիտեն՝ ի՞նչ տաել է ալդ, երբ տարիներով ոռւստիան խօսք չես խում, երբ կա-

րօտում ես ոռւս մալրենի բարբառին) ընկեր Լենինը յորդորում էր. «Դուք էլ ի՞նչ էք գանգառում միթէ առ էմիգրացիան է: Էմիգրացիան Պլեխանովինն ու Աքսել'րոդինն էր, որոնք ամբողջ 25 տարի աչքները չուր կարելով սպասեցին, մինչև որ տեսան տռաշին բանւոր-լեզափոխականին»:

Իրօր, ինքը Վլ. Իլ'ին էմիգրացիալում առջրում էր ինչպէս, բառիս բուն իմաստով, — առիւժը՝ վանդակի մէջ: Տեղ չկար, որ նա թափէր իր մեժ ու անսպառ եռանդրը, և նրա փրկութիւնն այն էր, որ գիննականի կենցաղ էր վարում: Նա այն էր անում, ինչ որ Մարքսն իր էմիգրացիալում: Օրական 15 ժամ անց էր կացնում զրագարանում զրբերի վրայ և իզուր չէ, որ այնմ հանդիսանում է մէկն ամենազարգացած մարքսիստներից և ընդհանրապէս մեր ժամանակի ամենազարգացած մարդկանցից:

Բայց՝ վերագառնունք առաջն էմիգրացիալին: 1901 թ. Լենինն այն ժամանակ իրեն մօտ մարդկանց (Մարտով, Պոտրեսով) մի խմբի հետ ձեռնամուխ է լինում «Կայծ» («ԱՌԿՐԱ») թերթի հրատարակութեան: «Իսկրա» անունն ալսօր քչերին է մի բան ասում: Բայց «Իսկրա» թերթը պատմական թերթ է, որ սերտ կապւած է ընկեր Լենինի անուան: Թէ թշնամիները և թէ բարեկամներն ասում էին «Լ. Լենին եան» «Իսկրա»: Այդ յանաի այլպէս էլ եղել է: Ամենուրեք, երբ և որտեղ էլ չի աշխատել Լենինը—խմբակներում, խմբագրու-

թիւններում, Կենտրոնական Կոմիտէում, թէ, վերջապէս, այժմ Փողովրդական Կոմիտրների Խորհրդում,—ալդ կազմակերպութիւններին անպայման Լենինեան գրոշմն է կպել: Այո՛, «Խոկրան» Լենինանական էր և գրանից չէ տումել, ալ միայն շահւել է: (ծափեր): «Խոկրա»-ում տպագրւած Լենինի կարեռագոյն յօդւածներից մէկի խորարադիրն էր՝ «Խոչից սկսել»: Այդ յօդւածում Լենինը մշակեց բանւորական շարժման և ուռւստկան յեղափոխութեան առաջիկայ ամրող ծրագիրը: Նա այդ յօդւածում ամրողապէս նիշեց մէր ծրագրի և յեղափոխական տակտիկայի հիմունքները:

Սրդէն Լենինի այդ անդրանիկ յօդւածում դուք կտեսնէք բատ էութեան բոլշեկոմի ամրող կվինտ-էսենցիան: Բայց այդ յօդւածն ուրբադիծ եղաւ Լենինի այն նշանակալի դրբի, որ կոչում է՝ «Ի՞նչ անել»:

Այն բոլորի շուրջը, որ զբում է Լենինը, միշտ պայքարն է եռում: Ո՞չ ոք կարող է անտարբեր մնալ նրա գրւածների հանդէպ: Կարելի է ատել Լենինին, կարելի է խելագարութեան աստիճան սիրել ընկեր Լենինին, բայց չէ կարելի չեզոք մնալ: «Ի՞նչ անել» զբում Լենինը զբեց ու յեղափոխական ոգով լուծեց այն ժամանակաշրջանի բոլոր ցաւոտ հարցերը: Եւ մի շարք ամիսներ ու տարիներ այդ գիրքը միաբ էր արթնացնում, նրա շուրջը կրքեր էին բորբոքւում, նրա մասին վիճում էին,

նրա շուրջը երկու անհաշտ բանակների անշատութն էր գարբնուում:

«Խոկրան» անհաշտ պայքար յախարարեց այսպէս կոչւած «էկոնոմիզմին»: Նա կուում էր օպորտունիզմի ամեն ավակերպութեան դէմ և ի թիւս գրանց՝ նաև էկոնոմիզմի, այսինքն՝ ապագայ մենշևիզմի դէմ: Նա էր գարձեալ, որ ամենաբուռն կոիւ սկսեց էս-էրների աւանտիւրիզմի դէմ: Եւ երբէք այսպէս ցայտուն չի եղել թէ էս-էրների կուսակցութեան նկատմամբ որքան հեռանկատ է եղել ընկեր Լենինը, որ դեռ ևս 1902—1903 թ. գուշակել է էս-էրական կուսակցութեան բաղդը՝ Մէկ մասձեցէ՞ք, հապա՛: 15 ասրի սրանից առաջ, երր էսէրների կուսակցութիւնը հէնց նոր էր ծնունդ առնում, երր նա իր շարքերում ունէր «Նարուդնայտ Վոլեա»-ի յայնի զործիչներ, երր մենք քաղաքական այն մեծ փորձառութիւնը չունէինք, որ տւեց մեղ յեղափոխութիւնը,—ի՞նչ զրութիւն կլինէր այն ժամանակ: Ճանդէս է դալիս էսէրների կուսակցութիւնը, որ պնդում է, թէ՝ ինքը կուում է յանուն սոցիալիզմի, որ ասում է, թէ՝ ինքն աւելի ձախ է, քան՝ «Խոկրան»: Եւ ահա աեղից վեր է կենում այն ժամանակ գեռ ևս երիտասարդ ընկեր Լենինը և ամրող աշխարհովը մին ու համարձակ նրանց այեղափոխական-աւանտիւրիստներ» մականունը ապիս եւ Լենինը յայտնում է: «Դուք, պարսնայք էսէրներ, մանք բուրժուազիալի ներկու յացուցիչներն էք՝ ո՛չ տւել, ո՛չ պակասո»: (Ծափեր):

Երբ Լենինն ասաց, որ էսէրների կուսակցութիւն է, նրա վրայ շննթ ու կայծակ տեղացին։ Ասում էին, Լենինի ընտառութիւնը վատ է, թէ նա մարդատեաց է, և այն։ Հենց այժմ զուք տեսնում էք, որ այդ իրադէս մարդարէական դուշակութն էր այն բանի, որ այսօր կայք (Ծափեր)։ Այժմ մենք զիտենք, որ ոռուսական արքուբենի մէջ «С.-Р.» տառերից ճակատագրական տառ չկայք ինչո՞ւ այդպէս ճակատագրական է այդ կուսակցութեան վիճակը։ Արովհետեւ սոցիալիստական կոչելով ինքնինքը, նա իրօք մանր-բուրժուական կուսակցութիւն է։ Բնիկ, Լենինն իրաւացի էր, տակրով, թէ զրանք ո՛չ թէ սոցիալիստներ են, այլ՝ մանր-բուրժուադիակի ներկայացուցիչներ, որ առ առաւելն զրանք մինակ լեզափոխական ռածանադիմուներ են, ցնդարաններ և ուրիշ ոչինչ։

Այժմ մենք ունենք մէկուկէս տասնամետի
վիթխարի փորձառութիւն, 1905 թ. յեղափոխու-
թեան փորձը, 1917—18 թ.թ. յեղափոխութեան
փորձը: Բայց սրանից տասնհինգ տարի առաջ իս-
կական ճշգրտութիւն նախասել, էս-էրների կու-
սակցութեան իսկական դինն որոշել — զբա համար
պէտք էր զրկեթէ մարդարէ լինել: Դրա համար
պէտք էր լեզուական-մարդարախան ահազին
ինտուիցիա ունենար զբա համար, մի խօսքով,
պէտք էր կենին լինել: (Մափեր):

Լենինի «Խոկրան» ո՞չ միայն քաղաքական պայքարը էր մղում, այլև կազմակերպչական մեծ աշխատանք էր կատարում: «Խոկրան» հաւաքում էր մեր կուսակցութեան ցիր ու ցան տաճարը: Միայն 90-ական թւականների սկզբին բանւորական կուսակցութիւնն ստեղծելու մասին ձտաժելու պարագաներ ստեղծեցին: Ընկ. Լենինը դլուխ է կանգնում նաև այս գործնական-կազմակերպչական աշխատանքին և «Խոկրա»-ին կից կազմակերպչական կոմիտէ ստեղծում: Եւ ընկ. Լենինը, որ կատարում էր «Խոկրա»-ի և թէորեաթիկական «Ալյո» («Յարյ») հանդիսի գրական դլխաւոր աշխատանքը, միաժամանակ կազմակերպչական կոմիտէի հոգին է գառնում:

Ընկ. Լենինի կինը՝ Նալեմզա Կոնստանտինով-
նա Կրուպսկայա-Ռևելեանովան «Խոկրա»-ի և կազմա-
կերպչական Կոմիտեի քարտուղարն էր: Թէ մեր
կուսակցութիւնն ինչով է երախտապարտ նրան՝ ազգ-
մասին կարելի է և պէտք է առանձին խօսեր Սլո-
տեղ միայն լիշեմ, որ ընկ. Լենինի ամբողջ աշխա-
տանքի մէջ, իրրե մեր կուսակցութիւնը կազմա-
կերպողի, մեծ մասն ունի Նալեմզա Կոնստանտի-
նովնան: Թողոր զրադբութիւնները նրան են պատ-
կանում: Մի ժամանակ նա էր զրադբութիւններ
վարում ամբողջ Ռուսիայի հետ:

Քեց-շատից վաղեմի անլեզար աշխատաւորնե-
րից ո՞վ չեր հանաչում Նադեժդա Կոնստանտինով-
նային։ Աւճ համար բերկրանք չեր նրանից նամակ

ստանալը: Մեզնից ո՞վ է, որ նրա հանդէպ անսահման վստահութիւն և ամենաքնքողչ սէր չի ունեցել...

Էնկեր Լենինի դէմ իր չարախինդ բանակութի մէջ Մարտովը մի անգամ «գեր-կենարոն Լենինի քարտուղար» անւանեց նրան: Ինչ արած, այժմ ռուսական ամրող պրոեւսարիատը հաղարտանում է՝ «գեր-կենտրոնով» և՛ նրա քարտուղարով...

Ժրաշանութեամբ, քայլ առ քայլ. Լենինը հաւաքում է անլեզալ կազմակերպութիւնը: Եւ 1903 թ. մէնք կուսակցութեան ॥ համագումարն ունեցանք: Եւ արդէն այդ պատմական համագումարում, երբ կուսակցութիւնը դեռ ևս մի էր, երբ նրա շարքերում կանգնած էին՝ Պլեխանովը, Զասուլիչը, Աքսել'րովը, Մարտովը, Պոտրեսովը և այլք, արդէն համագումարի աշխատանքների առաջին իսկ մօմենտից պարզէց, որ մէր դեռաստի կուսակցութեան իսկական առաջնորդն ընկեր Լենինն է հանդիսանում:

Էնկեր Լենինին պատկերում են իրեւ մի մարդու, որ չարլում, կրարում է, գործ ածում սոսկ խիրուրդիական զանակը և չի խնայում պրոլետարիան շարքերի միասնութիւնը: Սակայն՝ երբ կուսակցութեան երկրորդ համագումարում նկատւեց հիմնական պատահառումը, ընկ. Լենինը նախ գործ դրէց իր ամբողջ ազգեցութիւնը, որ կանխի անջառուք: Իրապէս, Լենինը դիակ բարձր գնահատել բանւորական շարժման միութիւնը: Բայց միայն միութիւնը բանուն սոցիալիզմի: Սոցիալիզմի գաղափա-

րը նրա հասմար ամեն բանից թանկ է: Եւ երկրորդ համագումարում, հենց որ նա ահսաւ, թէ իր տարածայնութիւնը Մարտովի, Աքսել'րովի և այլոց հետ ոչ թէ պատահական, աննշան տարածայնութիւն է, որ վերածնում է վաղեմի օպորտունիտական հոսանքը նոր գրօշի տակ, թէ յարութիւն է առնում հենց այն իսկ լեզալ մարքսիզմը, որի դէմ Լենինը պալքարել է 90-ական թւականների վերջը. Թէ իր նախկին բարեկամ Մարտովը, որին նա այնպէս մօտ էր ու «ուու»-ով էր խօսում հեար, որի հետ միասին է եղել աքսորանքում, որ այդ Մարտովն սկսել է կեղծել. թէ Պլեխանովը, որին ցայդ բարձր էր գնահատում, սկսել է ձեռքից տալ Մարքսիզմի սկզբունքները. թէ այդ Պլեխանովն արդէն իր մատը հրամցնում է օպորտունիզմին, և օպորտունիզմը շուտով նրա ձեռքը կրոնի՝ երբ Լենինը տեսաւ այս բոլորը, այն ժամանակ հարցը նրա համար անդառնալիօրէն վճռած ած էր: Նա ասաց, «Ես մենակ կմնամ, բայց կպարզեմ լեզափոխական մարքսիզմի գրօշը»: Եւ նա անջառաւեց Պլեխանովից:

Ինձ վիճակւեց այն ժամանակ արտասահմանում լիներ ինձ, որպէս երիգասարդ սոցիալ-դեմոկրատի, և երկու բարեկամներիս ներկայացրին Պլեխանովին: Մէնք գեռ ևս գեռատի էինք, իսկական ձագուկ-ներ, բայց ամբողջ հոգով մէնք համակրում էինք ընկեր Լենինին, մէնք կարգացել էինք «ի՞նչ անել» գերբր, գիտէինք, որ դա իսկրաբականութեան Աւետարանն է: Եւ ահա Պլեխանովը փորձեց մեր ա-

աաշ հեղնել Լենինին: Նա ասում էր. «Դուք գնում
էք նրա լետեից, բայց նա այժմ այնպիսի ճամբա
է բռներ, որ մի քանի շարթից լետոյ գուցե պէտք
դայ միայն խաւի ղներում ծակըններու
համար: Լենինը կուի դրօշ պարզեց իմ՝ Պլեխանովիս՝
դէմ, Զասուլիչի, Դէլչի դէմ: Մի՛թէ դուք չէք հաս-
կանում, որ այդ անհաւասար կոիւ է: Լենինի
բանը պըրծած է: Այն մօմենտից, երբ նա կարւեց
մեղնից՝ ձերերից, «Աշխատանքի Ազատադրութեան
Խմբակից», նրա երդն երդւած է»: Ասպէս էր խօ-
սում Պլեխանովը: Մեղ՝ երիասարդներիս վրայ այդ
որոշ ապաւորութիւն թողեց: Այդ խօսքի վրայ Պլե-
խանովը սաստիկ խոժոռեց յօնքերը և աղդու
էր մեղ: Մենք գնում էինք ընկեր Լենինի մօտ և
դանդատում: — Տե՛ս, ի՞նչ է ասում Պլեխանովը: Լենինը
ծիծադրում և հանդստացնում էր մեղ: «Ճու-
տերն աշնան են համարում. կիռենիք, կտեսնենք
ում հետ կերթան բանւորները»:

«Մի քայլ լառաջ, երկու քայլ լետ» — ասպէս
է ընոցթաղում ընկեր Լենինը կուսակցութեան
մենշեկական թեփ էվոլյուցիան: Մի քայլ լառաջ՝
էկոնոմիզմից դէպի խկրայականութիւն: Իսկ լետոյ՝
երկու քայլ լետ — խկրականութիւնից լետ, դէպի
«լեզալ մարքսիզմի» լիբերալ գաղափարները, որ
վերածնել են մենշեկամի մէջ: Եւ օպպորտիւնիս-
տական հիւանդութեան այդ ուցիղիվի (կրկնախ-
տի) դէմ ընկեր Լենինն ամենասանիսայ պայքար է
սկսում:

Նոր «իսկրա»-ին, (որի խմբագրութիւնից գուրս
եկաւ ընկեր Լենինն և որն անցաւ մենշեկակա-
րին) ի հակոսնեալ՝ ընկեր Լենինն ստեղծում է բոլ-
շևիկական առաջին «Յառաջ» («Վորե») թերթը:
Այդ թերթն առաջ մի թերթիկ էր, որ հրատարակ-
ում էր արտասահմանում հաւաքած գոօշներով:
Իսկ մենշեկական այն ժամանակ ունեին հսկալական
ապարատ, և՝ Պլեխանովի ու միւս «իկոն»-ների
ամբողջ հեղինակութիւնը, և՝ բաղմաթիւ թերթեր
ու բրոշիւրներ, և՝ Կ. Կ., և՝ Տ. Կ., և՝ կուսակցու-
թեան խորհուրդ: Ընկեր Լենինը սկսեց ոմբակոծել
մենշեկական բերդն այդ փոքրիկ գնդացիրով,
որ կոչւում էր «Վապերեոդ»: Բայց նա այնպէս հեռուն
ու անվրէպ էր խփում, որ շատ շուտով Պլեխա
նովի ծանր հրետանուց հետք անդամ չմնաց: Եւ
1905 թ. մօտ պարզ եղաւ, որ ամենը, ինչ որ կեն-
սունակ է ու շարժուն բանւորական պրոլետարական
Ռուսոստանում, այդ ամենը բոլշեկաների լետեից
կդնար:

1905 թ. ամառը հրաւիրւեց բոլշեկաների առա-
ջն համագումարը (ձեւականօրէն նա կոչւում էր
Ռ. Ա. Դ. Կ. երրորդ համագումար), պատմական
առաջին համագումարը, որ այժմեան կոմմունիստա-
կան կուսակցութեան հիմքը դրեց: Այն ժամանակ
առաջին անդամ Լենինը խօսք բացեց այն մասին,
որ առաջիկայ լեզափոխութեան ժամանակ մենք
կանդ չենք առնի բուրժուական հանրապետութիւն
ստեղծելու ճանապարհին: Արդէն այն ժամանակ

բնկեր Լենինը խօսեց ս.-դ. երապահան պարլամենտարիզմի հոտածութեան մասին։ Արդէն այն ժամանակ Լենինը խօսեց այն մասին, թէ մեր յեղափոխութիւնը կանգնած պիտի լինի բուրժուական և սոցիալիստական յեղաշրջութեարի անջրպետում։

Դժւար էր բոլշևիկների բանն այդ իրականութեան մէջ մեղ ճնշում էր ո՛չ միայն ռուսական իրականութիւնը, այլև—միջազգայինը։ Բերելը, որին Լենինը յարգում էր իրքեւ գերման բանւոր դասակարգի հանճարեղ առաջնորդի, օդտւում էր իւրաքանչիւր յարմար ու անյարմար առիթից, որ շանթի Լենինին։ «Ո՞նց թէ գուք Պլեխանովի դէմ էք։ Միթէ կարելի է, որ Պլեխանովին օպպորտիւնիստ լինի»։

Իսկ Աքսել'րոդի բան ու գործն այն էր, որ սմենքին, ով իրեն լսել կկամենար՝ հէքիաթներ էր պատմում, իրը թէ Լենինը երկրորդ Նեչայևն է, թէ Լենինը «Ճերերի» դէմ կռւելիս լոկ պատախնդրութեան է հետամուտ։ Միջազգային սոցիալ-դեմոկրատի ամբողջ մթնոլորտն այն ժամանակ թշնամաբար էր տրամադրւած բոլշևիկների դէմ։

Երրորդ համագումարի (ալսինքն՝ բոլշևիկների առաջին համագումարի) նախօրեակին Բերելը հետեւալ ծառալութիւնն արաւ մենշևիկներին։ Երբ մեր համագումարը հաւաքւեց, նա մեղ նամակ ուղարկեց գերման սոցիալ-դեմոկրատիայի Կենտրոնական կոմիտէի անունից։ Եւ այդ նամակի մէջ նա ասում էր. «Չէք կամենում, իս մանկիկներ, հաշտ-

ւեր։ Ես՝ Բերելը՝ ձեզ և մենշևիկներին միշնորդ դատարան եմ առաջարկում։ Անջատումս ո՛րն է. ձեր վէճերը տւէք մեր միշնորդ դատարանին»։

Սլդպիսի նամակով գիմեց ընկ, Լենինին Բերելը։ Լենինն այդ նամակը բերեց համագումար, և համագումարն ասաց. «Մենք շատ ենք յարդում ընկեր Բերելին, բայց թով տւէք մեղ՝ մեր կարծիքն ունենալ ցարի. և բուրժուազիայի դէմ կոխ մղելու եղանակի խնդրի մասին։ Եւ թով տւէք, որ պապ մենշևիկների հետ այնպէս հաշիւ տեսնենք՝ ինչպէս որ վայել է բուրժուազիայի աղենաների հետ։ Բերելը զարմացաւ մեր համագումարի «յանդդնութիւնից», բայց բացի ուսերը թօթւելուց ուրիշ ոչինչ չէր մնացել նրան։

Ես այդ միջաղէպը լիշում եմ այն նպատակով, որ ձեզ ցաց տամ, թէ ինչպէս էր ո՛չ միայն ռուսական, այլև միջազգային մթնոլորտ, երբ Լենինը հանդէս եկաւ իրքեւ այն ժամանակ համեմատաբար տակաւին փոքր, սոցիալիստական յեղափոխութեան բանակի ռմբածիդ։

* *

Արդէն 1905 թւի յեղափոխութեան մէջ իսկ դեկադար գեր վիճակւեց ընկեր Լենինին։ Արտաքուստ այդ այնպէս ակնբախ չէր, ինչպէս արդի յեղափոխութեան ժամանակ։ Դուք գիտէք, որ 1905 թ. Պետրովյան բանւորական Պատգամաւորների առաջին Խորհուրդն ստեղծւել էր մենշևիկների ձեռքով։ Բայց իր ամբողջ գործնական պայքարի

մէջ գեռ այն ժամանակ էլ բոլշևիկներին էր հետեւմ Պետրովդրադի Խորհուրդը: Երբ ալիքը բարձրացաւ, երբ գետն եղաւ իր ափերից, այն ժամանակ բանւոր դասակարգն զգաց, որ Խորհուրդներ ստեղծել—նշանակում է պայքարել յանուն իշխանութեան: Եւ այդ մոմենտին բանւոր դասակարդը բոլշևիկական դարձաւ:

Երբ հինդ թւականի յեղափոխութիւնը պարտած էր, երբ եկաւ հակա-յեղափոխութիւնը, երբ մենք սկսել էինք արդիւնքները քննել, այն յամանակ Մարտովն ու ընկ, նստեցին Բարելոնի շրերի եզերքներին և սկսեցին սգալ առաջին յեղափոխութեան ընթացքը: Այն ժամանակ էլ իրենք մենշևիկները խոստովանեցին՝ այս', յեղափոխութիւնն, աւազ, բոլշևիկական շաւզով գնաց, բանւոր դասակարդը, դժբախտաբար, բոլշևիկներին հետեւց:

Մոսկվայի զինւած ապստամբութիւնը, այդ թէև շախչախւած, պարտւած ապստամբութիւնը, ապօթէողն էր յեղափոխութեան մէջ բոլշևիկների բռնած տակտիկայի: Պլեխանովը կարողացաւ այդ ապստամբութեան արձագանդ տալ քաղքենիական խղթուկ մի նախադասութեամբ թէ՝ «Պէտք չէր զէնքի դիմել»:

Այլ վերաբերում ունեցաւ 1905-ի Մոսկվայի ապստամբութեան ընկեր Լենինը: Նրա համար աւելի վսեմ ու ազնիւ էջ չկար Մոսկվայի զինւած ապստամբութեան պատմութիւնից: Նրա առաջին դորին եղաւ նիւթեր հաւաքել այդ ապստամբու-

թեան մասին: Նա կամենում էր պարզել ամենամար շտրիխները, այդ ապստամբութեան տեխնիկական ամենալրկիտ մանրամասնութիւնները: Նա կամենում էր պարզել ապստամբութեան իւրաքանչիւր մասնակցի կենսազրութիւնը: Նա չանում էր հարցաքննել ապստամբութեան մասնակցած իւրաքանչիւր մարտական գործչի: Ապստամբութեան բոլը մասնակիցներին Լենինը հրապարակ էր հրաւիրում, որ նրանք պատմէին բանւոր դասակարդին ու ամբողջ աշխարհին Մոսկվայի զինւած ապստամբութեան նախտպատրաստութեան և նրա պարտութեան պատճառների մասին: Որովհետև՝ Լենինը հասկանում էր, որ Մոսկվայի ապստամբութիւնը—դա առաջին Փորպոստալին (նախադիրքի) ընդհարումն է բուրժուական աշխարհի հետ: Նա խորապէս հասկանում էր Մոսկվայի ապստամբութեան համաշխարհային—պատմական նշանակութիւնը, այնժամ շախչախւած, բանւորների արեան մէջ խեղդւած, բայց և ցարիզմի ու բուրժուալիզմի դէմ, ամենայետամեաց երկրում բանւորական այդ առաջին պանծալի ընդգումի նշանակութիւնը:

1905 թւի յեղափոխութեան մէջ Լենինի դերը, կրկնում եմ, վիթխարի էր: 1905 թ. Պետրովդրադի Խորհրդի նիստերին նա մի-երկու անդամ է ներկայ եղել: Ըսկեր Լենինը պատմում էր մեզ, թէ ինչպէս Խորհրդի ժողովաւմ, Ազատ-Տնտեսական Ընկերութեան շինութեան մէջ, սրահի մի անկիւնում, հասարակութեանն աննկատելի՝ նստել էր ինքը և ա-

ռազին անգամը նայում էր Բանւորական Պատգամաւորների Խորհրդին: Պետրոգրադում ընկեր Հենն անլեզալ կեանք էր վարում, կուսակցութիւնն արգելում էր նրան չափազանց աշկարայ երեալ: Մէր Կենտրոնական Կոմիտեի կողմից Խորհրդում Ա. Ա. Բագդանովին էր պաշտօնապէս խօսում: Եւ երբ յայտնի եղաւ, թէ Խորհուրդը պիտի ձերբակալեն, մենք ընկեր Լենինին Պետրոգրադի Խորհրդի այդ վերջին պատմական ժողովը գնալուց արգելեցինք, որ նա չձերբակալվի: 1905 թ. մի-երկու անգամ է տեսել նա Խորհուրդը: Բայց ես կարծում եմ, որ արդէն այն ժամանակ իսկ, երբ Ազատ-Տքնական Ընկերութեան մէջ վերեր մի անկիւն քաշւած նստած էր նաև նայում էր բանւորական այդ առաջին պարլամենտին, նրա ուղեղի մէջ, հաւանօրէն, արդէն այդ պահուն ժաղում էր Խորհրդային Իշխանութեան միաքր: Եւ, գուցէ, արդէն այն պահուն նա մտորում էր այն ժամանակը, երբ Խորհրդային պետութիւն կլինի, երբ Խորհուրդները, սոցիալիստական պետութեան այդ նախակերպարտները, կդառնան երկրի միակ իշխանութիւնը:

Դեռ 1905 թ. ընկեր Լենինը մեզ սովորեցնում էր, թէ Խորհուրդները պատահական կազմակերպութիւններ չեն, որ այսօր կան, վաղը—ո՛չ, թէ Խորհուրդները առօրեալ կազմակերպութիւններ չեն, պրոֆեսիոնալ միութիւնների նման, այլ՝ մի կազմակերպութիւն, որ նոր էջ է բացում միշտային:

պրոլետարիատի և համայն մարդկութեան պատմութեան մէջ: (Ծափեր):

Բանւորների Պատգամամաւորական Պետրոգրադի Խորհրդի պատմութիւնը ո՛չ ոքի այնպէս չէր հետաքրքրում, ինչպէս իրեն՝ ընկեր Լենինին: Առաջին Խորհրդին ձեւապէս ամենաառաջ մասնակցութիւնն ուներ և մեր ամենքիցս լաւ գնահատեց, թէ ի՞նչ է Խորհուրդը: Եւ նա խիստ զգով էր վերաբերում այդ լոգունգին: 1916 թւին, պատերազմի ժամանակ, երբ Շվեյցարիայում մեզ լուր եկաւ, թէ այսաեղ, Պետրոգրադում յեղափոխական կենդանութիւն է սկսւում և որ մեր ընկերներն սկսել են լոգունգ հոչակել Պետրոգրադում Բանւորների Պատգամամաւորական Խորհուրդի կազմակերպելու մասին, ընկեր Լենինն այդ առիթով թէ նամակներում և թէ յօլւածներում գրում էր: «Ընկը բանւորներ, Բանւորների Պատգամամաւորական Խորհուրդ կազմակերպելու լոգունգ՝ վսեմ լոգունգ է, որով չի կարելի խաղալ, չի կարելի կատակ անել Խորհուրդների հետ: Այդ լոգունգը պիտի արձակել այն ժամանակի, երբ գուշ կիմուէր մինչև վերջը գնալ, երբ դուք ձեր գասակարգի գլուխը գրաւ կդնեք յանուն յաղթանակի, երբ գուշ կասէր, թէ հասել է բանւորական իսկական յեղափոխութեան ժամը, իշխանութիւնը վերջնելու պահը: Այն ժամ և միայն այն ժամ կարելի է խօսել Խորհուրդների մասին: Իսկ յայդ՝ չի կարելի խաղալ այդ խօսքի հետ: Քանզի՝ Խորհուրդները կարող են ապրել միմիայն

իշխանութիւնն իրենց ձեռքն ունենալով: Խորհուրդ-
ները — բանտորական պետականութեան ձև են:
Խորհուրդները — բանտորների իշխանութիւնն են»:
Դրանով Լենինը կամենում էր ասել որ Խոր-
հուրդները չեն գասակարգալին այն սովորական
կաղմակերպութիւնները, որ, մենշեբիների և էսէր-
